

DOI: 10.57192/18291864-2023.2-9

Մարիամ Մ. Կարապետյան
Բանասիր. գիյր. թեկնածու

**ԷՎՐԻՍՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝
Կրթական էկոլոգիայի խնդիրները հաղթահարելու միջոց***

Բանալի բառեր – էվրիստիկա, կրթական էկոլոգիա, ուսանողակենտրոն ուսուցում, դասավանդման մեթոդներ, պատում, պատումի լրագրություն, գիտելիքի համատեքստերի արտադրություն, հայաստանյան կրթական համակարգ, փորձարարական ուսուցում:

Մուտք

Հայաստանում կրթական բարեփոխումների օրակարգում են բովանդակային և մեթոդական բազմաթիվ խնդիրներ, որոնք լուծելու համար ռազմավարություններ են մշակվում, դասընթացներ են կազմակերպվում: Ռազմավարությունները, սակայն, հաճախ միայն հռչակագրեր են մնում: Ծրագրերի արդիականացման և նոր մեթոդների կիրառման պրակտիկաներն ավելի հիմնավոր դարձնելու համար հետադարձ վերլուծություն ու ինքնանդրադարձ են անհրաժեշտ: Այս մտահոգություններն են պայմանավորել սույն հոդվածի նպատակը՝ **քննարկել բուհական դասավանդման ընթացքում համագործակցային մեթոդների կիրառման կոնկրետ օրինակներ համալսարանական մեկ դասընթացից:**

Հոդվածում վերլուծվում է ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետում «Պատումի լրագրություն» դասընթացի վարման մեր փորձը: Նախ քննարկելու ենք հայաստանյան կրթական էկոլոգիայի որոշ

* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.05.2023:

Վէմ համահայկական հանդես, ԺԵ (ԻԱ) տարի, թիվ 2 (82), ապրիլ-հունիս, 2023

խնդիրներ, մասնավորապես՝ արդի հումանիտար գիտությունների դասավանդման և յուրացման բարդությունները, ապա առաջարկելու ենք էվրիստիկայի կիրառումը՝ որպես առկա խնդիրների պայմաններում նպատակահարմար կրթական ռազմավարություն՝ մի շարք առավելություններով: Հողվածի չորրորդ մասում ներկայացնելու ենք տեսական պնդումների գործնական կիրառման օրինակներ՝ դասընթացի առանձին թեմաների շրջանակներում ուսանողների հետ համատեղ աշխատանքն ամփոփող մի քանի տեքստեր, որոնք գրել ենք ոչ թե դասերից առաջ, այլ հետո: Դրանք ցույց են տալիս, թե ինչպես է դասավանդման ընտրված մեթոդը պայմանավորում բովանդակությունը, ինչպես են քննարկումները մարմնավորում, ձևափոխում և հարստացնում դասախոսի նախնական մտադրությունը, փաստացիորեն թելադրում դասի ընթացքը՝ մնալով թեմայի շրջանակներում:

1. Կրթական էկոլոգիան որպես խնդիր: «Պատումի լրագրության» «հաշվարկները»

Կրթական գործընթացի արդիականացման մեթոդական բաղադրիչը որոշ իմաստով ավելի դժվարությամբ է հաջողում, քան բովանդակայինը: Բանն այն է, որ դասընթացի բովանդակությունն ավելի անմիջական կապ ունի այն վարող(ներ)ի գիտելիքների հետ, այսինքն՝ ավելի որոշակի, պակաս իրավիճակային է: Մեթոդական մասի կարևոր գործառույթներից մեկը պատասխանատվությունն է ասելիքի պատշաճ ապակողավորման համար, հետևաբար այն ավելի է մտահոգված հաղորդակցության գործաբանական կողմով՝ առավել քիչ կանխատեսելի, առավել բազմագործոն և դժվարկառավարելի: Եթե ուսումնական նյութը պետք է հարաբերել առավել ձևայնացվածի՝ այլ առարկաների ուսումնական նյութերի, տվյալ գիտակարգի արդի վիճակի, կրթական ցանկալի վերջնարդյունքի հետ, ապա բովանդակության «փոխանցման օպերատորը»՝ մեթոդական համակարգը, առնվազն «ավելի գործնականորեն» է կախված կրթական էկոլոգիայից:

Դասավանդման մեթոդների վերաբերյալ տարբեր դասընթացներն այստեղ օգնում են, բայց բավարար չեն, երբ պետք է հաշվի

առնել հենց կրթական էկոլոգիան¹: Խնդիր է մասնավորապես այն, որ դյուրամատչելի նյութի վարժված ուսանողներին դժվար է արդի հումանիտար բարդ տեսություններ դասավանդել, և այստեղ կրթական էկոլոգիան մեղավոր է ոչ միայն համաժամանակյա հարթության մեջ (այն է՝ ներկա պահի կրթական վիճակը), այլև տարժամանակյա: Առնվազն տասնամյակներ շարունակ հումանիտար և հասարակական գիտությունների արդի զարգացումներին լայն առումով անհադորդ մնալը խիստ դժվարհաղթահարելի հետք է թողել հումանիտար մտքի հետ հաղորդակցության տարբեր, նաև կրթական պրակտիկաներում: Ուսանողները լուրջ դժվարություններ են ունենում անգամ հայերեն տեքստի լեզուն ընկալելիս:

Ուրեմն ինչպե՞ս նորացնել կրթական բովանդակությունը, ի՞նչ լեզվով խոսել ժամանակակից հումանիտար գիտությունների բարդ տեսությունների մասին:

Հողվածում ներկայացնում ենք «Պատումի լրագրություն» դասընթացի վարման մեր փորձառությունը, որը ձևավորվել է այս մտահոգությունների հաշվարկով: Դասերը վարել ենք նախապես մշակված դիտանկյուններից կոնկրետ մեդիաարտադրանքի (եթերային, տեքստային, մուլտիմեդիա) ակտիվ քննարկմամբ տեսական պնդումներ դուրս բերելու եղանակով: Ամեն դասից հետո ուսանողներին ուղարկել ենք գրավոր տեքստ, որում ամփոփել ենք տվյալ օրվա քննարկման հիմնական արդյունքները: Կիրառված հնարքների հավաստի և հնարավորինս անխաթար փոխանցման նպատակով հողվածում այդ տեքստերից մի քանիսը ներկայացրել ենք ուղղակի մեջբերումներով: Այս մոտեցումը, կարծում ենք, նաև թույլ է տվել հողվածին հավելել ևս երկու շերտ՝ **դասավանդման մեթոդի քննարկման** շերտին գուգահեռ: Դրանցից մեկը «Պատումի լրագրություն» **դասընթացի տարբեր թեմաներ ներկայացնող նյութն** է, և հողվածի համապատասխան հատվածները կարող են կիրառվել որպես տեսական նյութ պատումի լրագրություն դասավանդելիս/տվորելիս:

¹ Կրթության էկոլոգիական տեսությունները հիմնված են այն գաղափարի վրա, որ կրթությունը զարգանում է ժամանակի հետ և բազմակի միջավայրերում: Կրթական հեռանկարները հնարավոր են դառնում և ձևավորվում են այն կրթական էկոլոգիայում, որում տվյալ անձը բնակվում է: **Կրթական էկոլոգիան այն ֆիզիկական, սոցիալական և մշակութային համատեքստն է, որում տեղի է ունենում ուսումնառությունը** (տես Bevan B., STEM Learning Ecologies: Relevant, Responsive, and Connected, <https://www.nsta.org/connected-science-learning/connected-science-learning-march-2016/stem-learning-ecologies> (մուտք՝ 26.02.2023)):

Երկրորդը հողվածի հարցադրումների և կառուցվածքի միջոցով ձևավորված **մետաձանաչողական** շերտն է. հողվածը տալիս է պատումի լրագրության վերաբերյալ գիտելիք՝ միաժամանակ թույլ տալով տեսնել այն որպես կոնկրետ իրավիճակներում ձևավորված պրակտիկա և դասընթացի բաղադրիչ:

Ազնիվ լինելու ու նաև ինքնին վերլուծության ենթակա կարևոր հանգամանք փոխանցելու համար նշենք, որ մեր մոտեցումներն էվրիստիկային ենք վերագրել ոչ ի սկզբանե, ավելի ստույգ՝ դասընթացի մոտավորապես կեսից: Այդ պատճառով դրանց վերագրումն էվրիստիկային որոշ չափով հետահայաց (ռետրոսպեկտիվ) է: Դա տեղի ունեցավ էվրիստիկայի դրսևորումներից մեկի՝ հարցերի միջոցով խնդիրների ինքնուրույն լուծմանը տանող մաստիկայի հետ դասավանդման մեր մեթոդների որոշ առնչության բերումով:

Այսպիսով՝ դասընթացի վարման եղանակները նախ եղել են ստեղծագործական լուծումներ՝ առանց դասակարգման: Հետագա ինքնանդրադարձն էվրիստիկայի ուղի դուրս բերեց: Դրա վերաբերյալ տեսություններն օգնում են ավելի հիմնավոր պատկերացնելու ստեղծագործականության գործառույթներն ու հնարավոր հանձնառությունների ծավալը:

2. Մեթոդական հիմքեր: Էվրիստիկա

Էվրիստիկայի մեխանիզմները հայտնի են իբրև «մտային կարճ ձանապարհներ»: Այդպիսիք են այն տրամաբանական հնարքները և մեթոդական կանոնները, որոնք կարող են օգնել եզրահանգումներ անելիս, որոշումներ կայացնելիս կամ «բացերը լրացնելիս», երբ տեղեկությունները հասանելի չեն կամ լիարժեք չեն, ինչպես նաև խնդրի լուծման հստակ քայլաշարի բացակայության դեպքում²: Հոգեբանական հաճախ անգիտակից գործընթացներ լինելուց բացի՝ էվրիստիկական ռազմավարությունները շատ տեսաբանների ուսումնասիրություններում գիտակցված և միտումնավոր կիրառելի ընթացակարգեր են:

2 Տե՛ս **McDonough M.**, Heuristic, <https://www.britannica.com/topic/heuristic-reasoning> (մուտք՝ 23.04.2023), **Rubaltelli E.**, Heuristics, in **Glăveanu V. P.** (ed.), *The Palgrave Encyclopedia of the Possible*, Cham: Palgrave Macmillan, 2022, էջ 648:

Բառարանային մեկնաբանություններից մեկի համաձայն՝ էվրիստիկան ներառվում է որպես օգնություն կամ ծառայում է որպես օգնություն «սովորելուն, հայտնաբերմանը կամ խնդիրների լուծմանը՝ փորձարարական և հատկապես փորձի ու սխալի [վրա հիմնված] մեթոդների միջոցով»³: Այն վերաբերում է խնդիրները լուծելու հետազոտական եղանակներին, որոնք ներառում են ինքնակրթության տեխնիկաներ՝ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով⁴: Էվրիստիկան նաև իբրև «փորձարարական հումանիտար գիտություն» է բնորոշվում⁵:

Էվրիստիկական ուսուցումը հաստատում է սովորողների գերակա դիրք և սովորեցնողների ղեկավար դեր: Դրա էությունը սովորողներին ուսումնական գործընթացում ակտիվ ներգրավվածություն թույլ տալն է, նրանց սեփական նախաձեռնություններին ազատություն տալը, նրանց պոզիտիվ մտածողությունը և հարցերին պատասխան փնտրելու նախաձեռնողականությունը խթանելը, ուսումնական խանդավառությունը բորբոքելը⁶:

Ֆիզիկայի սիմուլյացիոն դասավանդման բնագավառում կատարված մի ուսումնասիրություն պատմում է մի փորձի մասին: Համեմատվել են երկու կրթական միջավայրեր, որոնցում կիրառվել է էվրիստիկան: Միջավայրերից մեկում սովորողներին ուղղորդելու համար կիրառվել են միայն էվրիստիկայից քաղված մեթոդներ՝ առանց ներկայացնելու ինքնին էվրիստիկան: Մյուս միջավայրում ինքնին էվրիստիկան ևս բացահայտվել է սովորողներին: Արդյունքները ցույց են տվել, որ էվրիստիկայի օգնությամբ երկու միջավայրերում էլ սովորողները բարելավել են **առարկայական բնագավառի** գիտելիքները: Իսկ ուսումնառության **գործընթացի** ուսումնասիրությունը ցույց է տվել, որ էվրիստիկան բացահայտորեն ներկայացնելը նպաստում է ուսանողների ինքնակազմակերպմանը: Գիտելիքի և գործընթացի ցուցանիշների հարաբերումը ցույց է տվել փորձարկվող պայմանների տարբերությունները. ակտիվ ուսումնառողները բացահայտ պայմաններում համեմատաբար ավելի բարձր են ստացել

3 Heuristic, Merriam-Webster.com Dictionary, <https://www.merriam-webster.com/dictionary/heuristic> (մուտք՝ 17.04.23).

4 Տե՛ս նույն տեղում:

5 Տե՛ս, օրինակ, Ulmer G. L., Heuristics: The Logic of Invention, London: The Johns Hopkins University Press, 1994, էջ 12:

6 Տե՛ս Huijin S., Kejun S., Qingrui L., Heuristic Teaching Method on Innovative Talents Cultivation of Electrical Engineering, International Conference on Education Technology and Management Science (ICETMS 2013), էջ 862:

ավարտական թեստից, քան ոչ բացահայտ պայմաններում ուսումնառողները⁷:

Ներկայացված փորձը խոսում է հողվածի նախորդ բաժնուհանձնարարական մետաձանաչողական շերտի կարևորության մասին: Թեև ինքսնման փորձ չեն արել, սակայն ուսանողների արձագանքների և ձեռք բերած գիտելիքի ու հմտությունների վերլուծությունը թույլ է տալիս առնվազն ի գիտություն ընդունել դրա արդյունքները: Նշված տարում պատումի լրագրություն ուսումնասիրող ուսանողներն իրազեկված են եղել, որ դասընթացն իբրև համատեղ ստեղծագործություն է կառուցվում, և իրենք տեսական-գործնական արդյունքի հեղինակներ են: Իսկ այս հողվածը հավելյալ մետաձանաչողական շերտ կապահովի բուհական այս դասընթացի ապագա ուսումնառողների համար:

Տեսաբանների դիտարկմամբ՝ էվրիստիկական կարող է տարբերվել կիրառման մասշտաբներով: Դրա կիրառելիության աստիճանը պայմանավորված է **գիտակարգից կախվածությամբ** կամ **ընդհանրականությամբ**: Դրա առավել ընդհանրական սկզբունքները, օրինակ՝ «նախատեսել փորձարկումներ, որոնք ունենում են բնութագրական արդյունքներ» կամ «պարզեցնել խնդիրը», ավելի քիչ են կախված բնագավառից և կիրառության ավելի լայն շրջանակ ունեն: Հետևյալ պնդումը, օրինակ, «կառուցել համարժեք խնդիր ավելի քիչ փոփոխականներով», ավելի առանձնահատուկ է և ավելի սահմանափակ կիրառություն ունի⁸: Ուսումնասիրողները պնդում են, որ էվրիստիկայի այս երկու չափումների կիրառումը տեղեկացնում է սովորողներին էվրիստիկայի կիրառման հնարավորությունների մասին: Սա ավելի հավանական է դարձնում և՛ գիտելիքների ձեռքբերումը, և՛ դրանց փոխանցումը, քանի որ սովորողի համար տեսանելի են դառնում և՛ ինքնին էվրիստիկական, և՛ դրա կիրառման բնագավառները⁹: Համարվում է, որ էվրիստիկական ունի այնպիսի հատկանիշներ, որոնք այն հարմար են դարձնում ինչպես մեթոդական ցուցումների, այնպես էլ դրանց փոխանցման նպատակի համար¹⁰: Ըստ վկայակոչված փորձի՝ որպեսզի էվրիստիկայի մեթոդական ցուցումները փո-

7 Sten Veermans K., Joolingen W. van, Jong T. de, Using Heuristics to Facilitate Discovery Learning in a Simulation Learning Environment in a Physics Domain, "International Journal of Science Education", 2006, N 4, էջ 341:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 344:

9 Տե՛ս նույն տեղում:

10 Տե՛ս նույն տեղում, էջ 343:

խանցելի դառնան, սովորողներին պետք է բացահայտորեն ներկայացվի դրա տրամաբանական հիմքը¹¹:

Նշված հետազոտությունը բացահայտում է մեկ այլ էական հանգամանք ևս: Պարզվում է՝ կայուն կապ կա նախնական ստուգիչ գնահատականի և ավարտական ստուգիչ գնահատականի միջև էվրիստիկայի ոչ բացահայտ կիրառման դեպքում: Սակայն այդպիսի կապ չկա էվրիստիկայի բացահայտ կիրառման դեպքում. «Ռեգրեսիվ վերլուծությունը, որը կանխատեսում է ավարտական ստուգման միավորը նախնական ստուգման միավորի հիման վրա, ցույց է տալիս, որ [...] բացահայտ պայմաններում նախնական ստուգումից նվազագույն միավոր ստացած ուսանողները պարտադիր նվազագույնը չեն ստանում ավարտական ստուգումից, իսկ առավելագույն միավոր ստացած ուսանողները պարտադիր առավելագույնը չեն ստանում ավարտական ստուգումից: Սա նշանակում է, որ եթե որոշարկող գիտելիքն ընդունվում է որպես ուժեղ և թույլ ուսանողների տարբերակիչ, ապա բացահայտ պայմանն ավելի հաճախ է խզում նախնական ստուգումից ավարտական ստուգում այս փոխկապակցվածությունը, քան ոչ բացահայտ պայմանը՝ այդպիսով օգնելով թույլ ուսանողների առնվազն մի մասին»¹²:

Որպես պատումի լրագրության դասավանդման մեթոդների լիարժեք փորձարկման հաջորդ քայլ կարելի կլիներ գերազանցապես գործնական ուսուցումից անցնել տեսական ուսուցման՝ զարգացնելու բարդ տեքստերն ընթերցելու, հասկանալու և հարցադրումներ անելու ուսանողների կարողությունը: Դասընթացը, սակայն, մեկ կիսամյակ է տևել: Իբրև որդեգրված մեթոդի թերություն կարելի է նշել այն հանգամանքը, որ, գիտելիքների և հմտությունների բավականին ընդգրկուն շերտ փոխանցելով հանդերձ, այս մոտեցմամբ վարված դասընթացը թերևս որոշակիորեն ներածական է մնում, եթե դրա վերջնականատակներից մեկը համարենք պատումի վերաբերյալ որոշ արդի տեքստերի հիմնավոր յուրացումն ու դրանց կիրառումը որպես լրագրողական դիրքավորման հիմքեր և մեկնաբանության գործիքներ: Սակայն անգամ այս դեպքում դասընթացը չի գիջում տեսական նյութի ոչ հիմնավոր յուրացման հանգեցնող կամ բացառապես

11 Տե՛ս նույն տեղում, էջ 344-345:

12 Նույն տեղում, էջ 354:

գործնականի սահմաններում մնացող առավել տարածված մոտեցումներին: Այս կետում ակնհայտորեն դրսևորվում է հայաստանյան կրթական համակարգի թերությունը, մասնավորապես՝ առանձին դասընթացների տարանջատվածությունը, դասընթացների՝ միմյանց խնդիրներ և մեթոդներ (ոչ միայն ոլորտներ և թեմաներ) հանձնարարելու հնարավորության բացակայությունը: Կրթական էկոլոգիայի այս պայմաններում պատումի լրագրության դասավանդման համար ընտրված եղանակը կարծես ինքն իրեն դիրքավորում է իբրև «միայնակ գործորդ», որը ստանձնում է իր ռազմավարությունը՝ հասկանալով, որ, իր ակնհայտ առավելություններով հանդերձ, դա բավարար է միայն կոնկրետ Հայաստանում այսօր առկա կրթական միջավայրում:

3. Փորձառական ձևը՝ գիտելիքի համատեքստերի արտադրման միջոց

Ոլորտին նվիրված ուսումնասիրություններից մեկում նշվում է, որ էվրիստիկան անդրադարձական (reflexive) գործիք է, որն ունի սոցիալական դաշտերը (նկատի ունի Պ. Բուրդյոյի հղացքը) փոխակերպելու ներուժ¹³: Կարծում ենք՝ մասնավորապես հայաստանյան կրթական միջավայրերում էվրիստիկայի առաջարկած մոտեցումները կարող են նպաստել **խնդիրների հանդեպ գիտական վերաբերմունք զարգացնելուն՝ շրջանցելով զուտ տեսական-վերլուծական աշխատանքի հաղթահարման բարդությունները**: Էվրիստիկան ընդհանրապես մղում է համատեղելու տեսությունը և պրակտիկան, ինչպես նաև գիտելիքներին ու հմտություններին հավելում է կրթական գործընթացի համար կարևոր **վերաբերմունքային** բաղադրիչը՝ մեծացնելով ուսումնառության, ուսումնասիրության գիտակցվածությունը, խթանելով անդրադարձի կարողությունը: Իսկ մասնավորապես Հայաստանում, կարծում ենք, այս մոտեցումը կարող է միևնույն ժամանակ կարճել տեսության, պրակտիկայի և վերաբերմունքի անցումներն ու առկա խզվածքները. էվրիստիկան, որը հայտնի է իբրև տնտեսող և արագ կրթական ռազմավարություն, կարող է մղել շա-

13 Տե՛ս Tobin K., Alexakos K., Using Heuristics to Enhance the Quality of Cultural Production, in Tobin K., Alexakos K. (eds.), Transforming Learning and Teaching: Heuristics for Educative and Responsible Practices, Leiden, Boston: Brill, 2021, էջ 2:

րունակաբար կապեր ստեղծելու **տրամաբանական մտածողության** և **ստեղծագործական մտածողության** միջև՝ արտադրելով համապատասխան իրավիճակներ, պրակտիկաներ և հարցադրումներ: Հենց այս «արտադրողականության» և «խնայողության» խոստումներն ենք, ուրեմն, համարում մեթոդի ընտրության կարևորագույն հիմքերից մեկը:

Տրամաբանության և լեզվի փիլիսոփայության ոլորտներում նշանակալի ներդրում ունեցած փիլիսոփա Լ. Վիտգենշթայնի «լեզվական խաղերի» տեսությունն ընդգծում է, որ կարող ենք խոսել բառերի նշանակությունների մասին, կարող ենք կոնկրետ մտքեր արտահայտել, երբ «տրված է մնացյալ ամբողջ մեխանիզմը»¹⁴: Հայաստանում առկա կրթական էկոլոգիայի պայմաններում, երբ հումանիտար գիտելիքի մեծ բաց կա, երբ հումանիտար տեսությունների ուսուցման «համակարգն ու մեխանիզմը տրված չեն», համատեքստերի ստեղծումն ինքնին շատ կարևոր է: Այս տեսանկյունից ուսուցման փորձառական, ոչ գուտ տեքստային ձևը, չենք խուսափի ասել, հաճախ կարող է փրկություն լինել, որովհետև օգնում է խուսափելու շարունակական հղումներից ու հղումների հղումներից, կարծես միաժամանակ ձևավորում է գործնական իրավիճակ, դրա մասին խոսելու լեզվի կարիք և լեզվի կիրառման, այսինքն՝ բառերին ու պնդումներին նշանակություններ վերագրելու կոնկրետ փորձառական իրադրություն: Այսինքն՝ այս մեթոդի դեպքում սովորողները նույն պահին գիտելիք են ստանում գիտելիքի համատեքստերի, դրանց կիրառման բնագավառների ու իրավիճակների մասին, ինչպես նաև սովորում են լեզու, որով հնարավոր է կառուցել այդ գիտելիքը:

Այսպիսով՝ պատումի լրագրության դասավանդման՝ մեր որդեգրած տեխնիկական կարելի է գնահատել «լեզվական խաղերի» տեսության օգնությամբ և հայտնաբերել, որ ոչ թե պատրաստի, այլ քննարկումներով կառուցվող տեսությունը միանգամից հայտնվում է լեզվական խաղի՝ պայմանավորվածությունների, հանգամանքների միջավայրում, նշանակությունները գոյանում են անմիջապես՝ իբրև իրադրության զարգացում, իրադրության մեկնաբանություն. պայմանավորվում ենք, որ այս կամ այն հարցը կարելի է մեկնաբանել այս կամ այն կերպ, միաժամանակ ստեղծում ենք միջավայր, բնութագրական իրավիճակ, որը նախորդում և հաջորդում է տվյալ պայմա-

14 Витгенштейн Л., Философские исследования, М., АСТ, 2022, с. 21.

նավորվածությանը, հնարավոր է դարձնում տվյալ պայմանավորվածությունը:

4. Տեքստեր դասից հետո

Հողվածի այս բաժնում բերվում են կոնկրետ թեմաների դասավանդման օրինակներ՝ նախորդ բաժիններում քննարկված տեսական նյութն ավելի պարզորոշ դարձնելու համար: Ներկայացվող թեմաները չեն ընդգրկում դասընթացի ամբողջ նյութը, սակայն թույլ են տալիս պատկերացում կազմել քննարկված առավել կարևոր հարցադրումների շրջանակի, ինչպես նաև ուսուցման մեթոդական կողմի մասին: Ստորև ներկայացվող թեմաները համարակալված են պայմանականորեն՝ ելնելով հողվածի կառուցվածքն ավելի հստակ դարձնելու նպատակից, և չեն արտացոլում թեմաների՝ դասընթացի ծրագրով նախատեսված հաջորդականությունը:

Թեմա 1. Ինչո՞ւ են որոշ տեքստեր բարդ

Հետաքրքիր է այն **կողմնակիությունը**, որով ուսանողները ծանոթացան պատումի վերաբերյալ տեսություններին: Պատումի վերաբերյալ տեսական տեքստը նրանք ստացան ոչ թե իբրև կարդալու և սովորելու նյութ, այլ ձևափոխելու: Դա արվեց «Ինչո՞ւ են որոշ տեքստեր բարդ» հարցադրմամբ: Իսկ եթե վերնագրելու լինենք դասը՝ նկատի ունենալով միաժամանակ դրա բովանդակությունն ու մեթոդը, ապա կարելի է ընտրել «Տեսական նյութն ու այն կարդալ սովորելը՝ նույն դասին» վերնագիրը: Հաջորդ օրն ուսանողներին ուղարկածս տեքստը հետևյալն էր.

«Ողջո՞ւյն, սիրելի՛ ուսանողներ: Նախորդ դասին բավականին հետաքրքիր աշխատանք կատարեցինք: Ես խնդրեցի ձևակերպել մեր դասերին առնչվող որևէ նախադասություն: Օֆեյայի առաջարկով ընտրեցինք հետևյալը՝ «Պատումի մասին կարծիքները բոլորիս մոտ համընկնում են»: Այնուհետև ես խնդրեցի նախադասության բոլոր բառերից առաջ հերթով ավելացնել նոր բառեր, որ նախադասության փոխանցած տեղեկությունները շատանան: Աստիճանաբար արված հավելումներից հետո նախադասության այս տեսքի վրա կանգ

առանք. «Քանի որ դասընթացի շրջանակներում քննարկված՝ պատումի մասին սուբյեկտիվ կարծիքները բոլորիս՝ պատումի լրագրության խմբի բոլոր ուսանողների մոտ համընկնում են՝ պայմանավորված դասընթացի հիմնավորությամբ և համոզականությամբ, ուստի կարելի է փաստել, որ դասընթացի երկու ամիսներն արդյունավետ են եղել»: Այս նախադասության օրինակով ցույց տվեցինք, որ միտքը բարդանում է, երբ պարզ արձանագրող նախադասությանն ավելանում են հանգամանքներ, պատճառներ, արդյունքներ, նպատակներ և այլն: Ամեն մի հավելում կոնկրետ նոր տեղեկություն է ավելացնում, ինչպես նաև որոշակի համատեքստում է տեղադրում «փոքր ասույթը», տվյալ դեպքում՝ մեր ձևակերպած առաջին նախադասությունը: Ասացինք, որ գիտական միտքը, օրինակ, հաճախ է բարդ նախադասություններ ստեղծում (թեև ոչ մեր կազմածի նման անմշակ), քանի որ շարունակ ցույց է տալիս այն «հաշվարկման համակարգերը», որոնցում ճիշտ է տվյալ պնդումը:

Այնուհետև նախադասությունն առ նախադասություն կարդացինք Հրաչ Բայադյանի տեքստը պատումի վերաբերյալ¹⁵, որը ձեզ բարդ էր թվացել, թեև գրվել է հնարավորինս պարզ՝ ուղղված լինելով ավելի լայն լսարանի: Իմ նպատակն էր ձեզ ցույց տալ, թե ինչպես և ինչու է գոյացել «բարդությունը»: Այսպես՝ նախ փորձեցինք պարզեցնել առաջին նախադասությունը՝ ««Նարատիվ» բառը փորձելով թարգմանել հայերեն՝ ես հարմար գտա օգտագործել «պատում» բառը»: Միմյանց լրացնելով՝ ասացինք, որ այս նախադասությունը կարելի է տրոհել առնվազն երկու մասի՝ «Ես փորձել եմ հայերեն թարգմանել անգլերեն «նարատիվ» բառը» և «Ես հարմար գտա օգտագործել «պատում» բառը»: Բայց Հրաչ Բայադյանի տարբերակում նախադասության առաջին մասը դառնում է հանգամանք, իսկ երկրորդ մասը ձեռք է բերում հիմնական մտքի արժեք: Այս իմաստը կորչում է, երբ տրոհում ենք նախադասության ուղերձները՝ դրանք ձևակերպելով երկու նախադասությամբ:

«Պատում բառը ունի առավելություն մեզ հայտնի մյուս բաների նկատմամբ նրանով, որ որոշ ընդհանրացված իմաստ ունի՝ հերոսապատում, հայապատում...». այս նախադասությունը միաց-

15 Տե՛ս **Բայադյան Հ.**, Վիդեոբառարան – Նարատիվ (պատում), <http://diskurs.am/2015/10/621/> (մուտք՝ 13.12.2022):

րել է մի քանի պնդումներ, և այդ ընթացքում որոշ գեղջումներ, սղումներ են եղել: Հ. Բայադյանի նախադասության ամփոփած ուղերձները կարող էին բացվել հետևյալ կերպ. ««Պատում» բառից բացի՝ «նարատիվ»-ը կարելի էր թարգմանել այլ բառերով ևս: Ընտրել են «պատում» բառը, որովհետև այն մեզ ծանոթ է մի շարք բարդ բառերից, օրինակ՝ հերոսապատում, հայապատում և այլն: Այդ բառերը որոշ ընդհանրացված իմաստ ունեն, ընդհանրացված իմաստ ունի նաև դրանց «պատում» բաղադրիչը՝ որպես առանձին բառ: Այսպիսով՝ «պատում» բառը ծանոթ է հայերեն խոսողներին և ունի ընդհանրական իմաստ. այս հանգամանքներն առավելություն են տալիս «պատում» բառին «նարատիվ» բառի մյուս հնարավոր թարգմանությունների համեմատ»: Այս ամբողջ հնարավոր պարբերությունը Հ. Բայադյանի տեքստում վերածվել է մեկ նախադասության, որը թույլ է տվել սեղմել պարզ, «առաջին պլանի» պնդումները՝ դրանք ձևակերպելով ոչ թե որպես հիմնական, այլ օժանդակ պնդումներ:

Այսպես վերլուծեցինք հաջորդող մի քանի նախադասությունները ևս: Քննարկեցինք, թե ինչպես են տրամաբանական կապերն ու ասելիքի ծավալը պայմանավորում պատումի եղանակը: Մեր դիտարկած օրինակներում պարզ ասույթների սեղմումը ես **«բազմակի վերագրության» հնարք կանվանեի: Սա նշանակում է, որ** լեզվի խտության միջոցով մեկի փոխարեն բազմակի վերագրություններ ենք անում այս կամ այն երևույթին, այսինքն՝ այդ երևույթը բնորոշող մի քանի հատկանիշ ենք թվարկում միանգամից, դրան առնչվող մի քանի միտք ենք արտահայտում: Նույն բանը մյուս կողմից էլ կարելի է ասել. **լեզվի խտությունը բազմակի վերագրությունների արդյունք է:** Կարծում եմ՝ վատ չի հնչում:

Մեկ օրինակ էլ. ենթադրենք՝ ուզում ենք «բազմակի վերագրության» հնարքով ընդարձակել «Մեջբերումը ծավալուն է» նախադասությունը: Կարող ենք գրել, օրինակ, «Ծավալուն մեջբերման ավարտը [...]» և անմիջապես միտքը շարունակելու, նոր տեղեկություն հավելելու կարիք կզգանք, որ կարողանանք ավարտել նախադասությունը: Սա նոր ասելիքի փնտրտուքի է մղում, թույլ չի տալիս բավարարվել պարզ արձանագրումներով: «Ծավալուն մեջբերման ավարտը» կապակցությունը մեջբերմանը միանգամից մի քանի հատկանիշ է վերագրում՝ 1. մեջբերումը ծավալուն է, 2. մեջբերումն ավարտվում

է, 3. ավարտի հնարավոր կապը մեջբերման ծավալուն լինելու հետ, 4. ծավալուն մեջբերման ավարտի հետ կապված շարունակության ակնկալիքը և այլն:

Այսպիսով՝ վերևում նկարագրվածը պարզ վերագրությունները խտացնելու եղանակ է: Եթե գիտական տեքստ գրելու լինեք, հաշվի առեք սա. նախ կարող եք ձևակերպել համառոտ, «առաջին պլանի» պնդումներ, ապա դրանց ավելացնել նոր հանգամանքներ: Կտեսնեք, որ այսպես ավելի բարդ է դառնում յուրաքանչյուր հաջորդ նախադասություն գրելը, որովհետև մի քանի հանգամանք միավորում ենք մեկ նախադասության մեջ, և անհրաժեշտ է լինում ամեն հաջորդ նախադասությունը ձևակերպել ավելի խիտ ու հարուստ տեղեկության հիման վրա: Լրագրողական նյութերում ևս տեղեկություններ կտաք ձեր փոխանցած **փաստերի հանգամանքների** մասին, եթե հիմնական տեղեկություններին ավելացնեք դրանց հանգամանքներն ու համատեքստերը:

Նախորդ դասերին մեր քննարկած մեծ պատումը ևս համատեքստ է, սոխի շերտերի նման շարունակ ավելացող հանգամանքների «արտաքին շերտը»:

Թեմա 2. Կառուցվածքը՝ բովանդակային խնդիրները հարթելու միջոց

«Բարի երեկո, սիրելի՛ ուսանողներ: Այսօրվա դասի համար նախապես առանձնացրել էի պատումի վրա ազդող հետևյալ գործոնները՝ **ոլորտի թելադրանքներ, թեմայի թելադրանքներ, պատմողի թելադրանքներ, գրուցակցից ունեցած հեռավորության թելադրանքներ, չհողավորված հասարակական համոզմունքների թելադրանքներ, լրագրողի ստեղծագործական ազատություն:** Քննարկումից հետո¹⁶ ավելացան հետևյալ հղացքները՝ **գրուցավարի ակնկալիքների և գրուցակցի հանձնառությունների համապատասխանություն/անհամապատասխանություն** (այս ձևակերպումը հայտնվեց սովորականի պես մտավորականից մեկնաբանություն ակնկալող լրագրողի և այդ գործառույթը ստանձնելուց խուսափող գրողի հա-

¹⁶ Քննարկված նյութը տես **Մարտիրոսյան Ս.**, Արամ Պաշյան. «Փոփոխությունը կյանքի մեծ նշան է, ինչ որ լուսավոր կրիվ մահվան փիլիսոփայության դեմ», <https://hetq.am/hy/article/70974> (մուտք՝ 13.12.2022):

րաբերությունները քննարկելիս), **բովանդակային հակասություններն արտացոլող ու նաև մատնող կառուցվածք** (լրագրողի հարցերը «ցատկում էին» օրակարգային թեմայի քննարկումից դեպի գրողի կերպարը՝ «դատարկ տեղեր» թողնելով միջակայքում), **կառուցվածքի միջոցով բովանդակային խնդիրներից խուսափելու հնարավորություն»:**

Դասի ընթացքում ձևակերպված վերջին պնդման հիման վրա ուսանողները հանձնարարություն ստացան, և հաջորդ դասն ամփոփող-մեկնաբանող իմ գրառումը հետևյալն էր. «Բարի երեկո, սիրելի՛ ուսանողներ: Այսօր քննարկեցինք Մ. Մարտիրոսյանի հարցազրույցի մշակման ձեր տարբերակները (հիշեցնեմ՝ պետք է այնպես փոխելիք հարցերը, որ բովանդակության խնդիրներն անհետանային):

Մարիամն ու Օֆելյան փոխել էին հարցերի հաջորդականությունը՝ նախ շարելով այն հարցերը, որոնք ներկայացնում էին Արամի կերպարը, այնուհետև՝ հարցերը, որոնք վերաբերում էին անկախության թեմային: Այդպես վերանում էր թեմայից թեմա «ցատկերի» կտրտվածությունը, բայց օրակարգային հարցը, այն է՝ անկախության օրվա թեման, հայտնվում էր երկրորդ պլանում: Այս խնդիրը լուծելու համար որոշեցինք մոտավորապես այսպիսի մուտք ավելացնել. «Անկախության օրվա առթիվ զրուցել ենք գրող Ա. Պաշյանի հետ»: Այսպես զրույցի վերջ տեղափոխված թեման անոնսի ձևով հայտնվում էր նաև նյութի սկզբում:

Լուսինեն նյութի «դատարկ տեղերը» լրացնելու համար նոր հարցեր էր ավելացրել և այդպիսով կրկին պահպանել էր թեմայի գծային զարգացման սկզբունքը:

Երեքն էլ՝ Մարիամը, Լուսինեն և Օֆելյան, զրույցը տրամաբանական զարգացման թելին էին շարել:

Սեդան հանձնարարությունն ընկալել էր որպես հարցերն ու պատասխաններն իրար համապատասխանեցնելու առաջադրանք: Այսպես լրագրողի՝ առանց հարցական նշանի մտքերը, որ հաճախ ձևակերպվում էին որպես հարց կամ փոխարինում էին հարցերին՝ հարցազրույցին զրույցի ձևաչափ տալով, Սեդան վերածել էր ուղիղ հարցերի: Նա ավանդական հարցազրույցի էր վերածել հաճախ ասոցիատիվ կապերով կապված հարցերն ու պատասխանները՝ հարցի և պատասխանի միջև ստեղծելով հստակ համապատասխանություն:

Որպես վերլուծության հաջորդ քայլ ընդհանրացրինք ձեր արածը՝ ասելով, որ Մարիամի, Լուսինեի և Օֆելյայի համար նյութի փոփոխությունների հիմք և արդարացում էին եղել թեմայի գծային զարգացումը, գծային տրամաբանությունը, Սեդայի համար՝ լրագրության ավանդական ձևերը:

Իմ առաջարկած տարբերակը հետևյալն էր. որպեսզի պահպանենք զրույցի ողջ տեղեկատվությունը, այսինքն՝ նյութը կրճատելու կարիք չառաջանա, որպեսզի պահպանենք զրույցի զիգզագաձև ընթացքը, ինչպես նաև որպեսզի նյութի տեղեկատվական առիթի՝ անկախության օրվա թեմայի կարևորությունը չթողնենք հակիրճ անոնսի հույսին, կարելի է իբրև մուտքային պարբերություն զետեղել հետևյալ միտքը. «Անկախության օրվա առիթով գրող Ա. Պաշյանի հետ անցնելու ենք անկախությունից Արամին, Արամից՝ անկախությանը»: Այսպես արդեն վերանում է թեմատիկ անցումների անհետևողականությունը, քանի որ դրան գիտակցված բնույթ է հաղորդվում, և դա դառնում է հնարանք, արտահայտչամիջոց, ավելին՝ նոր ուղերձ է ավելացնում նյութին, այն է՝ անկախությունն ու գրողը, անկախությունն ու քաղաքացին պայմանավորում են իրար, խախտում են միմյանց սահմանները, սահմանում են իրար:

Մտքի զարգացման հաջորդ քայլին արդեն հասանք այնտեղ, որ **պատումի միջոցով շտկումներ անելու հնարավորությունը պատումի բովանդակայնության նշան է:** Փաստորեն, պատումը՝ ըմբռնված այս դեպքում արդեն որպես կառուցվածք, կաղապար, ունակ է արդարացնելու, հիմնավորելու, պայմանավորելու և օրինավորելու (լեզվագիտական) բովանդակությունները: Այսպես անցում կատարեցինք պատումի այն տեսություններին, որոնցում պատումը դիտարկվում է որպես մեծ պատմություն: Այս ընկալմամբ, Սեդայի բառերով ասած, փոքր պատմությունները միավորվում են մեծ պատմության մեջ: Ձեզ ծանոթ բոլոր մեծ ու փոքր գաղափարախոսությունները մեծ պատմություն են, որոնք ներքնացվում են, այսինքն՝ յուրացվում են անհատների կողմից և օրինավորում են տարբեր վարքաձևեր, մոտեցումներ և այլն: Այսպես սոցիալիզմի մեծ նպատակը՝ «մեծ տեքստը»՝ մեծ պատումը, կարող էր օրինավորել անհատական բազմաթիվ ազատությունների կորուստը խորհրդային տարիներին, ավանդա-

կան ընտանիքի մասին պատկերացումներն օրինավորում են հայրիշխանական ընտանիքում կնոջ ստորակա դերը և այլն:

Թեման դեռ ծավալելու ենք»:

Թեմա 3. Պատումը որպես «շաղկապների արդյունք»

«Սիրելի՛ ուսանողներ, ամփոփեմ այսօրվա աշխատանքը ևս: Ինչպես ասացի, մատյանում այսօրվա թեման ձևակերպեցի այսպես՝ «Պատումը որպես շաղկապների արդյունք»: Իսկապես, տեքստի պարզեցման և այնուհետև բարդացման վարժությունների ընթացքում հաճախ (եթե ոչ հիմնականում) շաղկապներ էիք հանում կամ ավելացնում: Եվ սա պատահական չէ. համադասության, ստորադասության հարաբերությունները և դրանց ենթահարաբերությունները, որ սովորել էք քերականությունից, նաև տրամաբանական կապեր են, փոքր ու մեծ կառուցվածքների միացման օղակներ: Բավական է գրել որևէ պարզ նախադասություն, ապա դրան ավելացնել «քանի որ», և արդեն շարունակության (նոր տեղեկության և նոր հարաբերությունների) կարիք կառաջանա: Ցանկացած «քանի որ» նոր շերտ է ավելացնում ասույթի բովանդակությանը, միևնույն ժամանակ դարձնում այդ ասույթը ոչ լիարժեք, անավարտ: Օրինակ՝ «Վերջին ամսվա ընթացքում գնաձր կազմել է X %» նախադասությունն ավարտուն պնդում է, որը հավակնում է ամբողջական տեղեկություն, ամբողջական պատկերացում լինելու: Բայց հենց որ գրենք «Քանի որ վերջին ամսվա ընթացքում գնաձր կազմել է X %», արդեն ստիպված կլինենք մտածել դրա հետևանքների մասին: Առհասարակ վատ չէ մտքում միշտ շաղկապներ «աշխատեցնելը»: Եթե անգամ ձեզ միայն առաջին պնդումն է պետք, փորձի համար դրան շաղկապներ կցեք և կտեսնեք, որ դա ձեզ ավելի վերլուծական նյութի հետքի վրա դուրս կբերի: Սա հողվածներ գրելու լավ տարբերակ է: Օգնում է տեսնել, որ ոչինչ ինքնին ու միանշանակ չէ, որ ամեն բան պատճառների ու հետևանքների հանգույցում է»:

Թեմա 4. Մեծ պատումը՝ փոքր պատումներով

«Բա՛րև, սիրելի՛ ուսանողներ: Վերջին երկու հանձնարարությունները՝ ա) պարզեցնել բարդ տեքստը, բ) բարդացնել ձեր հեղինակած որևէ նյութի մի հատված, հակադիր փորձառություններ են, բայց երկուսն էլ անհրաժեշտ են, եթե ցանկանում ենք հասկանալ՝ ինչ գործոններ են կազմավորում պատումը, ինչ հարաբերություններ են ընկած նախադասությունների մասերի, նախադասությունների և պարբերությունների, տարբեր տեքստերի միջև, ինչպես են առանձին մտքերը պայմանավորված ընդհանուր պատկերացումներով, դիրքերով, գաղափարներով, միջտեքստային կապերով: Այսօր հասանք այնտեղ, որ որևէ մեծ պատում կարելի է հասկանալ, եթե վերլուծենք այն կազմավորող փոքր պատումները, օրինակ՝ «հայրենասիրություն» հղացքը որոշակիացնելու համար կարելի է ուսումնասիրել, թե կոնկրետ ինչ թեմաներով է այն շրջանառվում, ինչ բովանդակություններ են ձևավորում դրա հանրային ընկալումը, այլ կերպ՝ ինչպես է ձևավորվում դրա վերաբերյալ դիսկուրսը, որն այս դեպքում կարելի է հասկանալ որպես հայրենասիրության վերաբերյալ շրջանառվող տեքստերի ամբողջություն:

Այսօրվա առաջադրանքը մեղիայում սահմանամերձ գյուղերի թեմայի լուսաբանման ուսումնասիրումն էր, ավելի կոնկրետ՝ ուսումնասիրելը, թե ինչ համատեքստերում է լուսաբանվում սահմանամերձ գյուղերի թեման: Անհրաժեշտ էր նախ առանձնացնել բաղադրիչ թեմաներ (օրինակ՝ սոցիալական խնդիրներ), ժանրեր (օրինակ՝ ակնարկներ սահմանամերձ գյուղերի բնակիչների մասին), ոճեր, ուղղվածություններ, ապա ամեն մի ընդհանրացումը տեղադրել ավելի լայն ընդհանրացման համատեքստում՝ փորձելով պարզել, թե ինչ մեծ պատումներ են այստեղ «աշխատում»: Ասացինք, որ կարելի է աշխատանքը սկսել վիճակագրական մոտեցմամբ՝ փորձելով հիմնական բանալի բառերի համացանցային որոնմամբ պարզել, թե ավելի շատ որ թեմաներով է լուսաբանվել սահմանամերձ գյուղերի կյանքը: Այս սկզբունքով գտանք հետևյալ թեմաները՝ 1. սահմանամերձ գյուղերի դպրոցներ, 2. սահմանամերձ գյուղերի ձանապարհներ, 3. գյուղատնտեսական աշխատանքների և արոտավայրերի հետ կապված

խնդիրներ, 4. ջրամատակարարում, 5. սահմանամերձ համայնքի կարգավիճակ, 6. չնայած դժվարություններին՝ հողին կառչած մնալը:

Անահիտն աշխատել էր այլ մեթոդով. փնտրել էր ոչ թե չեզոք բառակապակցությունը՝ «սահմանամերձ գյուղեր», այլ իրեն հետաքրքրող այլ հարցեր: Նշանակում է՝ Անահիտը նախապես որոշարկված հարցերի հիման վրա էր կատարել իր որոնումը: Այս եղանակով գտած հրապարակումների ընդհանրացմամբ դուրս էր բերել մասնավորապես հետևյալ ուղերձը. ինչ-որ բանի կործանումը նաև մեկ այլ բանի սկիզբ է (Անահիտի գտած մյուս ընդհանրացումը լավ չեմ հիշում: Խնդրում եմ, որ մեկնաբանություններում գրի):

Քանակական վերլուծության ենթարկելով մեր որոնումների արդյունքները՝ ասացինք, որ մեր գտած 8 ուղղություններից 5-ը սոցիալական խնդիրներ են, իսկ սա նշանակում է, որ սահմանամերձ գյուղերի թեման մեղիայում հողավորվում է նախ որպես սոցիալական խնդիրների շարք: Իսկ 3-ը (Մարիամի ձևակերպած 6-րդ կետը և Անահիտի երկու կետերը) ունեն ընդգծված արժեքային բաղադրիչ: Նկատեցինք, իհարկե, նաև այն, որ այս առանձնացումը մեծ չափով պայմանական է, քանի որ սոցիալական խնդիրների ներկայացումն էլ վերջին հաշվով կարող է արժեքային կողմին ծառայել: Այստեղ էլ նշեցինք, որ կարելի է առանձնացնել ուղղակիորեն արժեքային բաղադրիչ ունեցող լուսաբանումները և անուղղակիորեն, ենթադրաբար արժեքային բաղադրիչ ունեցողները, այնուհետև՝ հնարավոր քաղաքական դիրքերը, որոնց հետ կապվում են այս ուղղությունները:

Այսպիսով՝ բաղադրիչ թեմաների (փոքր պատումների) առանձնացմամբ և այնուհետև դրանց ընդհանրացմամբ հնարավոր է լինում սահմանամերձ գյուղերի խնդիրները պատկերացնել առավել ընդհանրական գաղափարական դիրքերի (մեծ պատումների) համատեքստում, տեսնել, թե որտեղից են սերում առանձին թեմաները, և հակառակը՝ տեսնել, թե սոցիալապես նշանակալի ինչ ընդհանրական բովանդակություն, ինչ մեծ պատում են արտադրում առանձին թեմաները»:

Թեմա 5. «Ապառաասպելացնել առասպելները»

«Սիրելի՛ ուսանողներ, մեր երեկվա դասի ամփոփման արդյունքում դուրս բերեցինք հետևյալ հղացքները, որոնք ես պարտաձանաչ կերպով գրառում էի.

1. Ապառաասպելացնել առասպելները: Նոր սոցիալական առասպելները (չհարցարկվող, անդրադարձի չենթարկվող, բնական ու ինքնին հասկանալի համարվող պատկերացումները) կազմաքանդելը համարեցինք լրագրողական կարևոր հանձնառություն: Ասացինք, որ առասպելների ընդհանրականությունը, համընդհանուր վերաբերելիությունը (օրինակ՝ ազգ-բանակի սկզբունքը բանակի դերն ու գործը վերագրում է ողջ ազգին) լուծարում են ինստիտուցիոնալ չափումներով հստակորեն բաժանված սոցիալական դերերն ու գործառնությունները, վերացնում են դրանց հասցեականությունը (օրինակ՝ ազգ-բանակի հղացքը կարող է աղոտացնել պետական ինստիտուտների առավել մեծ և կոնկրետ պատասխանատվությունը բանակի զարգացման գործում): Խնդրեցի ձեզ որևէ առասպել հիշել, որի ապառաասպելացումը կուզեիք հանձն առնել: Չեմ հիշում՝ ո՛ր մեկդ որպես սոցիալական առասպել նշեց «աշխատանք չկա» պնդումը՝ ասելով, որ դրա ապառաասպելացումը կարող է ենթադրել նյութերի շարք այն մասին, թե կոնկրետ ինչպիսի աշխատանք չկա, ինչով է դա պայմանավորված, ինչպես է դա կապված համապատասխան որակավորում ունեցող մասնագետների պակասի հետ և այլն: Այս օրինակով էլ կարելի է տեսնել, որ առասպելներն ապապատմականացնում են երևույթները, մշտականացնում՝ անտեսելով դրանց պատմական բնույթը, այն է՝ կոնկրետ բովանդակությունը, պայմանավորվածությունը կոնկրետ ժամանակաշրջանով, հանգամանքներով, նպատակներով, ինչպես նաև դրանց փոփոխելիությունը: Հետևաբար ապառաասպելացնել կարելի է այս բոլոր անտեսվող հարցերի հնչեցմամբ:

2. Ապառաասպելացման նպատակով տվյալ թեման դուրս բերել իր քննարկման ավանդական շրջանակներից՝ դիտարկելով թեմատիկ, բովանդակային, ոճական այլ շրջանակներում:

3. Թեմայի համացանցային որոնման եղանակներ՝ ա) «վիճակագրական» մեթոդով, բ) նախապես մշակված հարցերի միջոցով, այն է՝ արդեն կանխադրված դիրքերի հիման վրա:

4. Ի՞նչ փոքր պատումներով է հողավորվում տվյալ մեծ պատումը, և հակառակը՝ փոքր պատումներն ի՞նչ մեծ պատումներ են հողավորում:

5. Քանակական վերլուծության մեթոդը (արդյունքները քանակական տեսքի բերելու միջոցով չափելի դարձնելը) որպես մեծ պատումները քննելու գործիքներից մեկը:

6. Դիսկուրսի և մեծ պատումների առնչությունները»:

Թեմա 6. Ո՞ր տեքստը կարող է հեշտությամբ պատմվել

«Սիրելի՛ ուսանողներ, երեկ խոսեցինք տեքստերի վերարտադրման մասին: Հարցրինք՝ որ տեքստը կարող է հեշտությամբ պատմվել: Ասացինք, որ լուրերն ավելի հեշտ է պատմել, որ դրանք ավելի հեշտությամբ են տարածվում, միննույն ժամանակ հեշտությամբ են տեղեկատվական աղմուկ ստեղծում: Տեղեկատվական աղմուկից հաճախ ենք դժգոհում, երբ խոսում ենք սոցցանցերի մասին. այնտեղ բոլորը խոսում են: Արագ ու հպանցիկ ծանոթությունը մեր ֆեյսբուքյան ընկերների հրապարակումներին ծնում է արագ և հեշտ տարածվող տպավորություններ ու մտքեր: Տեղեկատվական աղմուկի միջավայրում արժեքավոր տեղեկություններն ու մեկնաբանությունները խլանում են: Իզուր չէ, որ որևէ թեմայի առնչությամբ կարող է միտումնավոր տեղեկատվական աղմուկ ստեղծվել՝ որպես մանիպուլյացիոն տեխնոլոգիա. համատարած աղմուկի մեջ, երբ բոլորը խոսում են, անվսելի է դառնում նաև այն խոսքը, որը ցանկանում են լքեցնել:

Այս համատարած տեղեկատվական աղմուկն ընդմիջելու եղանակ համարեցինք երկար ձևերի ժուռնալիստիկայի տեքստերը՝ սթորիթելինգը, մուլտիմեդիա պատմությունը, որոնք վերադարձնում են դանդաղ և հանգամանալի ընթերցմանը: Թեև շատ ենք լսում, որ կյանքն արագացել է, որ պետք է գրել հակիրճ ու պարզ, որ մարդիկ հասցնեն արագ կարդալ, բայց մյուս կողմից էլ ավելի ու ավելի է տարածվում երկար ձևերի ժուռնալիստիկան: Այն կրկին խորամուխ լինելու կարիք է առաջացնում:

Ինչո՞ւ: Պատասխանելու համար կրկին համեմատեցինք լուրերն ու երկար ձևերի ժուռնալիստիկայի տեքստերը: Նույն փաստի

մասին լուր կարող են գրել տարբեր լրագրողներ: Թեև լուրը տարածվում է տարբեր պատմողների կողմից տարբեր ձևերով, բայց նույն փաստի մասին տարբեր լրագրողների գրած լուրերը, վերջին հաշվով, նույն լուրն են, եթե լրագրողները գրագետ են աշխատել և հնարավորինս անխաթար են փոխանցել իրադարձության «դաբլյունները»: Կարելի է համեմատաբար հեշտությամբ վերապատմել նաև հիմնականում փաստերից ու վերլուծություններից կազմված հոդվածը, իսկ հեղինակային ձեռագիր, ուժեղ արտահայտչականություն ունեցող նյութը վերապատմելը նույնքան հեշտ չէ: Մեր քննարկած ֆոտոպատմության օրինակով ասացինք, որ արվեստի հնարներով կառուցված պատմությունը վերապատմելը գրեթե անհնար է: Հավաստիության համար ստիպված ենք լինում կրկնել տեքստը. անպայման հարկ է լինում ցույց տալ նկարները, ասել հենց այն բառերը, որոնք գրված են տեքստում:

Այսպիսով՝ քանի որ ակտիվ ստեղծագործական աշխատանք ու արվեստի տրամաբանությանը հատուկ այլ բաղադրիչներ պարունակող նյութը դժվար է վերապատմել ու վերաշարադրել, կարծես կարիք է առաջանում վերադառնալու դեպի բնագիր տեքստը, մանրամասն ուսումնասիրելու այն, մենակ մնալու տեքստի հետ: Այստեղ հիշեցինք Վալտեր Բենիամինի տեսությունը՝ «Արվեստի գործն իր տեխնիկական վերարտադրելիության դարաշրջանում», որում նա պնդում էր, որ երբ հնարավոր է դառնում տեխնիկական միջոցներով վերարտադրել արվեստը, այն կորցնում է իր աուրան (իսկությունը, եզակիությունը, որոշակի վայրի և պահի հետ կապվածությունը): Բայց նաև հակաձառեցինք տեսաբանին՝ ասելով, որ տեխնոլոգիական զարգացումները նաև ինքնուրույն արվեստներ, ինքնուրույն տրամաբանություններ ու կառուցվածքներ են ստեղծում: Այսպես մուլտիմեդիա տեքստը, պատումի լրագրության տեքստը կարծես վերադարձնում են դանդաղ կարդալու, խորամուխ լինելու կարիքը և հնարավորությունը:

Ստացվում է՝ երեկ կրկին ընդգծեցինք արվեստի հնարներով լուսաբանման առանձնահատկությունները: Ասացինք, որ սա մշակութային լուսաբանում է իր բնույթով՝ անկախ նրանից, թե ինչ ոլորտ է լուսաբանվում: Քննարկեցինք «մշակութային» ասվածը որպես դադար տալու, մտածելու, դիտելու դիրքեր փորձարկելու, որոշ գեղագիտական ապրումներ ու հարցադրումներ փորձառելու եղանակ»:

Թեմա 7. «Հասկացություններ ընթացքից»

«Բա՛րև, սիրելի՛ ուսանողներ: Գրի եմ առել նախորդ դասի քննարկման արդյունքները: Դուք պետք է նշեիք մինչ վերջին դասը մեր քննարկած հասկացությունները, որոնք տպավորել են ձեզ: Այսպիսի ցանկ դուրս եկավ (հետ ու առաջ եմ արել և մեկնաբանել եմ երբեմն).

- Պատմել չպատմվողը:
- Փնտրել չերևացող իմաստներ:
- Գործիքների և նպատակի սահմանում:
- Լրագրողական նյութի «ոչ լրագրողական» ձևեր:
- Փաստերի և արտահայտչամիջոցների հավասարակշռություն:
- Լուրերի տրամաբանության և արվեստի տրամաբանության հարաբերակցությունը պատումում:
 - Ընտրել պատմելու տարբեր ռակուրսներ:
 - Գիտակցել կաղապարների առկայությունը և փորձել դուրս գալ դրանցից:

• Կաղապարներից դուրս այլ կաղապարներ կան (օրինակ՝ ժանրերի սահմանափակությունը խախտելիս հայտնվում ենք լրագրության նոր միտումների կաղապարներում: Մենք քննարկեցինք երկար ձևերի լրագրության ընձեռած հնարավորություններն ու դրա սահմանափակությունները):

• Գիտակցել ձևի պայմանականությունը որպես խնդիր (ցանկացած ժանրային կաղապար, մոտեցման այս կամ այն եղանակ միշտ իր բովանդակությունն է ավելացնում լուսաբանվող նյութի բովանդակությանը, հիմնականում աննկատ կերպով ձևափոխում է նյութը: Խնդիրն այստեղ այն է, որ այդ ձևափոխությունները մնում են չգիտակցված: Օրինակ՝ ոչ ոք լուրերի թողարկում դիտելիս չի կասկածում արագորեն իրար հաջորդող իրադարձությունների անցողիկության բնականությանը, ռիթմի բնականությանը: Այլընտրանքային լուսաբանման տեխնիկաները հաճախ փորձում են խախտել լուրերի տրամաբանությունը):

• Իմպրովիզի դերը պատումում (որսալ հանգամանքների փոփոխությունները և կիրառել դրանք: Կուզեի, որ դուք ուշադրություն դարձնեիք նաև մեր դասի կառուցվածքին. ես դասը վարում եմ նա-

խապես ընտրածս նյութի, թեմայի վերաբերյալ իմ պատկերացումների և իմպրովիզի միջակայքում՝ ստեղծագործական ակտիվությամբ ձեռքունս պահելով դասի ընթացքում գոյացող պատումի թելը: Այսինքն՝ պատմողի ակտիվությունը կառուցվածքներ ստեղծող թել է):

- Օբյեկտիվ թվացողի սուբյեկտիվ կողմերը:
- Պատմելիս ինքդ քեզ տեսնել իբրև դիտող (վերլուծել սեփական մոտեցումը պայմանավորող հանգամանքները (օրինակ՝ անձնական շահագրգռվածություն, թեմայից ունեցած հեռավորություն, գաղափարական ազդվածություն, կրթական մակարդակ) և նկատի ունենալ դրանք՝ հնարավորինս անաչառ լինելու համար):
- Պատմելիս սեփական դիրքի որոշարկում՝ օբյեկտիվության պատրանքի փոխարեն:
- Չլսձձել բովանդակությունը, պարզել բովանդակությունը, վերացնել բովանդակության հակասությունները կառուցվածքի միջոցով:
- Բովանդակությամբ արդարացնել ժանրը կամ ժանրով՝ բովանդակությունը:
- Լրագրողի դերի վերահիմաստավորում:
- Անվանելու փորձառության զարգացում (ներկայացնելով այս կամ այն հարցը, պատմելով այս կամ այն բանն այս կամ այն ձևով՝ անուններ ենք տալիս երևույթներին, հողավորում ենք տարբեր հարաբերություններ ու նշանակություններ):
- «Խնդիրների ստեղծում» (այս կամ այն խնդրի մասին պատմելով՝ տեսանելի ենք դարձնում խնդիրը, որը մինչ այդ կարծես գոյություն չուներ: Խնդիրներ «ստեղծելու» լիազորությունը լրագրողներին օժտում է իմաստների արտադրման ու մեկնաբանման գործառնությամբ: Տեսաբաններն էլ են նշում, որ մեկ էլ քաղաքական գործիչներն են, որ լրագրողների արածի հետ համեմատելի ծավալով խնդիրներ են սահմանում):»:

Ամփոփում

Այսպիսով՝ պատումի լրագրության մեր ներկայացրած դասընթացը 2022-2023 ուստարում ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի մի խումբ ուսանողների հետ համագործակցության

արդյունք էր: Մեկ կիսամյակի ժամաքանակի համար չափազանց ծավալուն նյութն այստեղ, անշուշտ, սեղմվել է, և կարևոր հարց է, թե ինչն է սղվել, ինչն է հոդավորվել, ինչն է ձևափոխվել այս սեղմումից:

Դասընթացի ծրագրով նախատեսված վերջնարդյունքները հետևյալներն էին. «Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կիմանա պատմողական տեխնիկաների դերն ու նշանակությունը, պատումի բնույթով պայմանավորված՝ լրագրողական հրապարակման տեսանկյունների, բովանդակության, ուղերձների փոփոխությունները,

2. կկարողանա նույն խնդիրը լուսաբանել տարբեր կառուցվածք ունեցող հրապարակումներով՝ գիտակցաբար ընտրելով պատմելու այս կամ այն եղանակը,

3. կկարողանա խնդրարկել սեփական լրագրողական պատումի և սոցիալական նշանակություն ունեցող ավելի ընդգրկուն պատումների առնչությունները,

4. կկարողանա վերլուծել հայաստանյան լրագրության ոլորտում պատումային նոր եղանակների զարգացման միտումները, գտնել օրինակներ և քննարկել դրանք համապատասխան եզրաբանությամբ,

5. կկարողանա վերլուծել մեդիատեքստերի թեմատիկ, ժանրային, կառուցվածքային և ոճական առանձնահատկությունները և դրանց նշանակությունները՝ որպես պատումի տարրեր»:

Հոդվածում մեկնաբանված մեթոդական գիտնացը և **դասերից հետո** ձևավորված «դասախոսության» տեքստերի (որոնք արդեն ավանդական իմաստով դասախոսության տեքստեր չեն) դիտարկումը թույլ են տալիս հաստատել, որ դրանք առնվազն համապատասխանել են ակնկալվող կրթական վերջնարդյունքներին: Առանցքային նշանակություն ունի այն, որ առանց որոշակի տեսական գիտելիքի հնարավոր չէր լինի նշված գործնական հմտությունների զարգացումը, և ներկայացվող մեթոդների հիմնական ներդրումն այն հարցում է, թե ինչ միջոցներով է ձևավորվել այդ գիտելիքը՝ մնալով ֆոնային, վերածվելով գործիքի և ոչ թե հիմնանպատակի: Կարծում ենք՝ հաստատիոր գրքերն այս դասընթացում վերածվել են ոչ թե համատեքստերից կտրված հատվածների (ինչը մեկ այլ դեպքում կլինեք հնարավոր առավելագույնը սահմանափակ ժամանակի և դասընթացի՝ առավել-

լապես գործնական հմտություններ զարգացնելու նպատակի պարագայում), այլ կարծես հղումների, որոնք հայտնվել են մեկ այլ՝ ինքնուրույն գործընթաց-տեքստի մեջ: Դասավանդման մեթոդի առումով ձեռքբերումներ են բարդ նյութի օտարության հաղթահարումը, լրագրող-ուսանողների՝ գործնականությանը տված նախապատվությունը հաշվի առնելը, առկա կրթական էկոլոգիայի պայմաններում¹⁷ առավել ռացիոնալ և իրավիճակից չպոկված նպատակի ու դրան հասնելու եղանակների ընտրությունը:

Իբրև դասընթացում կիրառված մեթոդների թերություն հավանաբար կարելի է նշել դրանց իրավիճակայնությունն ու պակաս կայունությունը, սակայն դրանք փոխհատուցվել են ստեղծագործականության բարձր մակարդակով, որը հաղթահարում է տեսությունների վերացականությունը և նյութի ինքնուրույն բացահայտման, հետազոտական աշխատանոցի, ներգրավված մասնակցության իրավիճակ ստեղծում: Թեկուզ իբրև մասնավոր փորձ՝ սա հետաքրքիր ենք համարում իբրև ստեղծագործականության և իրավիճակայնության կիրառման պիտանի օրինակ: Անշուշտ, այստեղ բաց է մնում լսարանի գործոնի հանգամանակի վերլուծության հարցը: Դասընթացը վարել ենք առաջին անգամ, և փորձառությունս հիմնված է կոնկրետ ուսանողների նախասիրությունների և ունակությունների վրա: Բայց եթե հաշվի առնենք այն, որ դասընթացը կամընտրական է եղել (նշանակում է՝ ուղղված է եղել դասընթացն ինքնական ընտրած լսարանի), և կոնկրետ լսարանի թելադրանքներն են կիրառվել դասի այս կամ այն պահը «ստեղծագործելիս», լսարանի եզակիությունն ու որոշակիությունը դադարում են իբրև ներկայացվող մեթոդների սահմանափակություն ընկալվելուց: Սակայն նաև այստեղ է մեթոդի էությունը:

Մարիամ Մ. Կարապետյան – ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դոցենտ: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են մեդիայի և մշակութային ուսումնասիրությունների, մշակութային լրագրության, հաղորդակցության տեսությունների, մեդիա-հասարակություն փոխառնչությունների հիմնախնդիրները:

Էլ. հասցե՝ mariamkarapetyan@ysu.am

¹⁷ Ինչպես հոդվածի սկզբում ենք նշել, նկատի ունենք մասնավորապես արդի հումանիտար մտքին ծանոթանալու թեկուզ լեզվական պատնեշը ներառյալ ինչպես եվրոպական լեզուներին չտիրապետելը, այնպես էլ անգամ հայերեն տեքստերը ոճի, կառուցվածքի և բովանդակության տեսանկյունից «անհասկանալի» համարելը:

THE APPLICATION OF HEURISTIC METHODS

As a Means of Overcoming the Problems of the Ecology of Education

Mariam M. Karapetyan

Candidate of Sciences in Philology

Key words – heuristics, education ecology, student-centered learning, teaching methods, narrative, narrative journalism, production of knowledge context, Armenian education system, experimental learning.

The article analyzes the experience of the "Narrative Journalism" course at the Faculty of Journalism of Yerevan State University. The chosen teaching method is interpreted as an example of applying the principles of heuristics. The article first discusses some problems of the ecology of education in Armenia, in particular, the difficulties of teaching and mastering modern humanities, then suggests the use of heuristics as an expedient educational strategy in the context of existing problems.

The hypothesis is put forward, according to which, in the educational environment of Armenia, the approaches proposed by heuristics can contribute to the development of a scientific attitude to problems and bypass the difficulties of overcoming purely theoretical and analytical work. When using this method, students at the same time receive knowledge about the contexts of knowledge, areas and situations of their application, as well as they learn the language by means of which they can build this knowledge. Thus, the presented method of teaching narrative journalism is evaluated using L. Wittgenstein's theory of language games. In accordance with this, a theory that is not ready, but is based on discussions, immediately appears in the environment of the language game, i.e. in the environment of agreements and circumstances, and its meanings are formed as a development and as an interpretation of the situation at the same time.

The article provides examples of the practical application of theoretical statements - several texts summarizing joint work with students within the framework of individual topics of the course, written not before the lesson,

but after it. Such texts show how the chosen method of teaching determines the content of the lesson, how discussions embody, transform and enrich the intention of the teacher, actually dictate the course of the lesson, remaining within the framework of the topic.

Резюме

ПРИМЕНЕНИЕ ЭВРИСТИЧЕСКИХ МЕТОДОВ

Как средство преодоления проблем экологии образования

Мариам М. Карапетян

Канд. филол. наук

Ключевые слова – эвристика, экология образования, студентоцентричное обучение, методы преподавания, нарратив, нарративная журналистика, производство контекстов знаний, система образования Армении, экспериментальное обучение.

В статье анализируется опыт преподавания учебного курса «Нарративной журналистики» на факультете журналистики ЕГУ. Выбранная методика обучения трактуется как пример применения принципов эвристики. В статье сначала обсуждаются некоторые проблемы экологии образования в Армении, в частности, сложности преподавания и освоения современных гуманитарных наук, затем предлагается применение эвристики как целесообразной образовательной стратегии в условиях существующих проблем. Выдвигается гипотеза, согласно которой в образовательной среде Армении предложенные эвристикой подходы могут способствовать развитию научного отношения к поставленной проблеме и преодолению сложностей чисто теоретико-аналитической работы. При использовании этого метода учащиеся в одно и то же время получают информацию о контекстах знаний, областях и ситуациях их применения, а также они обучаются языку, с помощью которого можно освоить эти знания. Представленная методика преподавания нарративной журналистики оценивается с помощью теории языковых игр Л. Вит-

генштейна. Согласно выдвинутой гипотезе, не готовая, а строящаяся на обсуждениях теория сразу же появляется в среде языковой игры, т.е. в среде договоренностей и обстоятельств, а значения формируются как развитие и как интерпретация ситуации одновременно.

В статье приводятся примеры практического применения теоретических утверждений – несколько текстов, обобщающих совместную работу со студентами в рамках отдельных тем курса, написанных не до урока, а после него. Эти тексты показывают, как выбранный метод обучения обуславливает содержание урока, как дискуссии воплощают, преобразовывают и обогащают намерение преподавателя, фактически диктуют ход урока, оставаясь в рамках темы.

REFERENCES

1. **Bayadyan H.**, Videobararan – Narativ (patum), <http://diskurs.am/2015/10/621/> (**In Armenian**).
2. **Martirosyan M.**, Aram Pach'yan. "P'op'okhut'yuně kyank'i mets nshan ē, inch'-vor lusavor křiv mahvan p'ilisop'ayut'yan dem", <https://hetq.am/hy/article/70974> (**In Armenian**).
3. **Vitgshstejn L.**, Filosofskije issledovanija, M., АСТ, 2022 (**In Russian**).